ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ, ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2014թ. նոյեմբերի 28-ին կայացած նիստում <<Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման>> միջգերատեսչական հանձնաժողովը քննարկել է վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա ստանալու նպատակով <<Գ.Նազարյան և ընկերներ>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը և հետևյալ փաստաթղթերը.

1. Տեղեկություններ լիցենզավորվող գործունեության իրականացումն ապահովող մասնագետների մասին

2. Պղնձի բարձր պարունակությամբ ֆեռոմոլիբդենի և մոլիբդենի օքսիդի ստացման ժամանակ առաջացած արտադրական թափոններից ամոնիումի մոլիբդատ ստանալու համապատասխան արտոնագիրը

3. Նշված արտադրական թափոններից ամոնիումի մոլիբդատ ստանալու տեխնոլոգիական մոտեցումը և համապատասխան մեկնարկային կանոնակարգը

4. Նյութատեխնիկական հագեցվածության փորձաարտադրական՝ ընկերությանը պատկանող տեղակայանքները, սարքավորումները և անալիտիկ գործիքները, լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրի՝ անհրաժեշտ պայմաններով ապահովվածությունը հավաստող լուսանկարները

5. Տեղեկանք համապատասխան տարածքային հարկային տեսչությունից՝ հաշվառման մեջ լինելու մասին:

Հայտատուի կողմից լրացուցիչ ներկայացվել են.

- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը, որը <<Գ. Նազարյան և ընկերներ>> ՍՊԸ-ին տրվել է 2014 թվականի հոկտեմբերի 31-ին,
- թմրամիջոցների և հոգեմետ նյութերի՝ ՀՀ կառավարության սահմանած պրեկուրսորների ներմուծման և մեծածախ առևտրի գործունեության լիցենզիայի պատճենը, որի համաձայն՝ կազմակերպությանը պատկանող պահեստները սարքավորված են ՀՀ օրենսդրությամբ պահանջվող ազդանշանային համակարգով և ունեն օրենսդրությամբ պահանջվող տեխնիկական հագեցվածությունը:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը կնպաստի վտանգավոր թափոնների ծավալների նվազեցմանը և շրջակա միջավայրի վրա ազդեցության

դրական փորձաքննական եզրակացության առկայությունը՝ միջգերատեսչական հանձնաժողովն առաջարկեց նշված կազմակերպությանը տրամադրել վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա:

Ա. Գրիգորյան		Ս. Խաչատրյան	
Ա. Ալեքսանդրյան		Վ. Խաչատրյան	
Ս. Գալստյան		Ե. Տերտերյան	
Ա. Առուստամյան		Ա. Մարտիրոսյան	
Կ. Կարապետյան		Ն. Կնյազյան	
Ա. Եգանյան		Ի. Հակոբյան	